


սահմանէր մեծաւ մասամբ Պադոս լեռամբն՝ յորոյ դադաթան է արդ դղեակն։ Ի մուտս չորեքտասամներորդ դարուն Այտըն ոմն տեղապահ սուլդան Օսմանայ առաջնոյ՝ տիրեաց քաղաքին, և յետ նորա որդի նորին խօմէր։ Սա մինչդեռ ՚ի պատերազմունս դեգերէր, չոոդացւոց ժամ պարապոյ դտեալ դիմեցին նաւա-տորմաւ ՚ի վերայ քաղաքին, զբազումն ՚ի նաւացն այրեալ ՚ի նաւահանգստին, տիրեցին մօտ առ նմա դղեկին Ս. Պետրոսի՝ զոր յիշեցափն ՚ի վեր անդր. այլ միւս կողմանք էին ՚ի ձեռս խօմէրայ։ Յերկրորդում ամին մինչդեռ լատինացիք տօն կա-տարէին ՚ի մայր եկեղեցւոյն (որ արդ Հիսար ճամի), խօմէր ՚ի վերայ յարձակեալ սպան զբազումն, և զեպիսկոպոսն եպիսկոպոսական զգեստուքն և զայլս՝ փախրա-տական արկ ՚ի դղեակն, առ որով անկաւ և ինքն։ Յետ ոչ բազմաց լուեալ Լէնկ-թիմուրի եթէ լատինք և Տաճիկը յար ՚ի կուոփ կան, յարձակեցաւ ՚ի վերայ քա-ղաքին յամին 1402 ընդ ծով և ընդ ցամաք, զոր վայրապար զամն եօթն պաշա-րեալ էին սուլդան Մուրատ և Պայէզիտ որդի նորա. հրամայեաց զօրաց իւրոց մի մի քար արկանել ՚ի նաւահանգիստն որ արդ կոչի Այի փաշա վերանեսի. և յետ չորեքտասամն աւուր տիրեալ քաղաքին ՚ի հուր և ՚ի սուլ մաշեաց։ Զինայէթ քա-ղաքապետ կարգեալ Զմիւռնիոյ ՚ի Լէնկթիմուրայ, մինչ խորհէր տիրել և այլոց քաղաքաց, սուլդան Մէհմէտ Այարեաւ ՚ի վերայ նորա յամի 1419 և հալա-ծեաց, կրծանեալ և զամրութիւն քաղաքին. բայց յետոյ կոչեալ զԶինայէթ՝ ետնմա վերստին զառաջին պատիւն։ Ապա սուլդան Մուրատ նուաճեաց զբազաքն յամին 1424. և յանուն նորա Զմիւռնացիք դրամ հատին, որպէս Եգիպտոս և Աղրիանուպօլիս, որոց միայն չնորհեալ էր այն պատիւ։ Առ Բ Սուլդան Ահմէտիւ վենետիկեցիք ահեղ նաւատորմաւ ելին ՚ի վերայ Զմիւռնիոյ. այլ միջնորդելով հիւ-պատոսացն Գաղղիոյ, Անգղիոյ և Հոլանդիոյ դարձան յետու։ Անտի և այսր Զմիւ-նիա ոչ ինչ կրեաց յարտաքին թշնամեաց. այլ մահ տարաժամ և երկրաշարժ և հրդեհ բազում անդամ յաւեր ապականութեան դարձուցին զնա։



17 ՅՈՒՆՈՒՄՐԻ

Արևելք և արևմուտք, ամենայն ազգք լուսակրօնք՝ այսօր զարմացմամբ հոչակեն Ղփտի պատանւոյ մը վսե-մական ընտրութիւնը և աննման յաղ-թանակը, որ զարմացուց զմեծամեծս և զինքնակալս երկրի։ Ինքն այլ հին և ազնուատոհմ աշխարհի մը՝ սակաւա-թիւ ընտիր մնացորդաց մէկն էր. — արդեօք Մեմիեայ, Թէրէի և Սայիսայ երեսուն թաղաւորական ցեղերէն էր, թէ ուրիշ տոհմէ. — յայտնին այս է, որ մեծարութեամբն և հոգւոյն ազ-նըւութեամբ վեհագոյն էր քան զբըր-

դաշէն ֆարաւնս, և բարձր յաղթա-նակաւն դերազանցեց քան զաշխար-հական Սեսոստրիս։ Մեծին Օգոստոսի տիեզերակալութեան հասակին հասած էր, 18 կամ 20 տարուան. կազմուածքն և կերպարանքն կատարեալ, բնու-թիւնն զուարժ, կամբն առատ, ազա-տութիւնն անարգել, հնարքն պատ-րաստ, հոգին մեծախոհ, ըստ աշխար-հի բաղդն՝ յաջողակ և նախանձելի։ Եւ թէպէտ երկրաւոր բարեաց մեծագոյ-նը նոր կորուսեր էր, շատ ժամանակ չէր որ իր սիրելի ծնողքը ՚ի դերեզման հանգուցեր էր, սակայն սրտապինդ մտածութեամբ հանգերձեալ յուազոն՝

տիսրութեան ժամանակը լցեր, և իր մէկ հատիկ փոքրիկ սիրունակ քեռ՝ եղբայրութեան հետ հայրութիւն ընելով՝ ծնողական և ընտանեկան բոլոր կարտը և սէրը՝ այն փափուկ հարազատին խանդակած աչացն և աղուադէմ երեսացն վրայ կը վայելէր: — Սակայն միայն անով չէր կրնար ընդերկար շատանալ. տարիքն, բաղդ, առուգութիւն՝ կուրծքը կը զարնէին. սրտէն հազար ձայն կ'ելնէր. աչքն կրակ կու դառնային, գլուխն անթիւ խորհուրդներով կու ծփէր, կու թնդայր. երբեմն անոնցմէ մէկն բարձրանալով՝ ամէնուն տիրել ու սիրտը նուաճել կ'երևէր. բայց հոգին բարձրագոյն ձայն մը ձգելով՝ զսիրտն այլ կու սանձէր, և թէ բոլորվին չէին այլ լոեր կիրքն՝ գոնէ փոթորկէ դադրած ծովու ալիքներու նրման՝ առանց սպառնալեաց շարժէին և ցածնային:

Իր բնակած երկրին բնութեան նրման՝ իր բնութիւնն այլ ներգործէր. երբեմն չորս դին պատած և շնչած հրնոցագոյն օդն՝ սիրտը և երևակայութիւնը կու բորբոքէր. երբեմն կանոնաւոր զովարեր հովս ազնուագոյն ըզգացմունքներով կու խազաղէր: Երկու ահեղ ընդարձակութեանց մէջ երկայնած է այն երկիրն. մէկ կողմէն անծայրածւալ ովկիանոս մը, անդադար կապուտակ կողերովն եռալով, պատանւոյն միտքը մէկմը յանհունս կու հրաւիրէր, մէկ մ'այլ անոր դիմաց այնպէս փոքր կ'երևէր՝ որ կարծես թէ առանց նաւափայտի՝ պիտի իշխէր ուրբով կոխել, թևով թռչիլ, լեռնաձե մկանունքներէն անցնիլ. մէկայլ կողմէն ոչ ինչ նուազ անբաւածիգ չոր ծով մը կու տարածուէր փոշէկուտակ անապատին, ուր աչաց տեսութեան հետ գրեթէ կենդանութեան յոյսն այլ կու սպառի: Սակայն պատանւոյն սրտին եռանդն երբեմն այնպէս սաստիկ վառւէր, որ ծով ու ցամաք անտարբեր կ'երևէին, կարծէր թէ կոխած տեղն վարդ-պիտիրումնի, նայած տեղն կաթն աղբիւր պիտի բղիէ: Առուգութիւն,

հարստութիւն, աղատութիւն անպակաս ունէր. բաղդին ու կամացն չկայր արգելք, չկայր մէկն հակառակ: Այն ամենայն բարիք և բաստք՝ որոնց այդ հասակին մէջ շատերն կու բաղձան, քիչերն կու գտնեն, և հազիւ ոմանք վայելեն, մանաւանդ թէ վայելել կարծեն, իր համար զրեթէ տիրասէր ծառայից նման պատրաստ կեցած կու փութային ակնարկութեանը, որ կատարեն փափագածը: Բայց իր փափագն չէր լցուեր. չէր գտուեր մէկն որ կարենար ըսել, թէ ես եմ անոր սրտին ուզածն, թող թէ տիրողն պատիւք իրեն համար խարելիք կ'երեւէին, զինուորական աստիճանին՝ իր ներքին արութեան համեմատ մրցանք մը չէին ցուցըներ, գիտութիւնք անգամ իրը իր մտաց ծարաւոյն անկարող գեղք՝ մէկ զի կու մնային. իսկ զրօսանք և հեշտութիւնք՝ աւելի անարգք ազմիւ սրտին, և աւելի անօրէն բոնաւորք քան իրաւացի զօրաւորք բնութեանը վրայ, որ երկրաւորէ բաղադրեալ՝ երկնաւոր և աննիւթ նպատակի մը համար եղած ըլլալն կ'իմացընէր: — Ի՞նչ պէտք էր ուրեմն այն ազնիւ պատանւոյն. ինքն իսկ կու հարցընէր իր սրտին. ի՞նչ պէտք է ինծի, որ հասնիմ մեծ նպատակիս:

Այս բանս շատ հեղ իր առանձին շրջագայութեանց մէջ՝ արտաքին բնութեան և ներքին բերմանց հարցընելով, և անպատասխան մնալով, օրմ'այլ մտաւ այնպիսի տեղ մը՝ ուրմիայն ՚ի վերայ երկրի ճշմարտութիւնն իր պատգամը համարձակ քարոզէ. պատանւոյն խնդրածն այլ այս էր. ճշմարիտ բարի, կատարեալ բարի: Հազիւ թէ տաճարին դռնէն ներս մըտաւ, լսեց ճշմարտութեան աներկիւղ բարձրածայնութիւնը. — Դու որ կ'ուզես սրտիդ հանգիստ, կատարեալ բարի, թող զամենայն բարիս զոր ունիս՝ և գտնես զիս: Պատանւոյն սրտէն քարի պէս ծանր բան մը թաւալեցաւ ընկաւ. քօղի պէս սեւութիւն մը մոքէն վերացաւ, հոգին անփորձ զմայլմունք մը

զգաց . փութացաւ բնտրածը գտնելու... բայց դեռ ամպ մը զյցսը կէս ծածկէր . դարձեալ յետ դարձաւ , և ահա ճշմարտութիւնն քարոզէր խորածայն . « Մի հոգար վաղուան համար » : Այլ չուշացաւ պատանին . մէկէն փութացաւ՝ իր ստացուածոցը , որ այնուհետեւ իր չէին . ադարակները բաժնեցիր ծառայից և ընդոծնաց , տունն և ինչքը վաճառեց և ստակ ընելով ցըրուեց աղքատաց և սուրբ տեղեաց . թողուց ամէն երկրաւոր ինչ , ամէն բանէ զատուեցաւ ուրախութեամբ ... Բայց , ո՞հ , կայր բան մը , բան մը միայն՝ ուսկից չիկրցաւ մէկէն՝ ի մէկ զատուիլ և անտրում թողուկ ... իր մէկ հատիկ քուրիկն : Սակայն ճշմարտութեան ձայնն անկէ ետեւ յաղթաձայն կ'որոտար սրտին մէջ . առաւ քոյրն այլ տարաւ իրմէ հեռու թողլու . թէ և սրտին կրածն նման բան մ" էր Աբրահամուկրածին զիսահակ տանելու ատեն . այո՛ , նահապետն աւելի մեծ և դառն զոհ պիտի ընէր , բայց ունէր այլ դեռ զաւին մայրը , և ուրիշ զաւակ այլ . և հարիւրեմեայ ծերութիւն մը , որ վայեկքն այլ , ցաւն այլ կու մոռացընէ . իսկ պատանւոյս միակ մնացած ստացուածն՝ այն կաթնակից սրտակից քուրիկն էր , և բաժանման մորմոքն քաշելու համար՝ ամբողջ երկայն կենաց մը կարծելի միջոցն դիմացը կար . ՚ի վերայ պյար ամենայնի , տարաւ քոյրը դրաւ խաղաղութեան դադար մը . մայրանման կուսանաց սուրբ խնամոցը յանձնեց . և անոր արտասուալից աշաց վրայ իր հրեղէն շրթումքը դրոշմելով , թողուց հոն , որ մէկ մ'այլ գտնէ ... ՚ի հանդերձեալ կեանս . — և առանց յետ դառնալու սրացաւ այն սենեկէն՝ ուր կարծես թէ քոյրն մեծնալով և ծերանալով միշտ իր եղբօրը սիրոյն հոտը կ'առնուր : Մինչդեռ անիկայ թողլով շառաչոտ ծովուն տարածութիւնը՝ յորմէ երբեմն անցնիլ և նոր աշխարհ մը գտնել կու բաղձար , դարձաւ անորոտ անապատին կողմը . և թագաւորէ թագաւորի սուրբհանդակ զրկուած

Մօրկի նման՝ որ տաճիկ ուղուովն աւագը կը լափէ , ծածկեցաւ մինչև այն ատեն անմարդաձայն մնացած ցամաքածովուն անհուն արհաւրաց մէջ ... Հոն մինակուկ արևուն հետ շատ ու շատ տարիներ կ'ելնէր կու մտնէր առանձնութենէ առանձնութիւն . հասակէն աւելի աշխարհ կու հնանար կու փոփոխուէր . իսկ ինքն ամենեին դրսի աշխարհէն բան չիմանալով կամ չուզելով իմանալ՝ իր սիրտը կ'ընդարձակէր , կու բարձրացընէր , կ'ազնուացընէր , մօտեցընէր , նմանեցընէր իր Արարչին : Եւ նա յետ շատ տարիներու զրկեց իրեն հետեւող բիւրաւոր մարդիկ , որոց եղաւ հայր և պատճառ նորօրինակ կենաց , իբրև անյագ աշխարհակալ մը թողլով զերկրաւորս՝ երկնակալութիւն ընելու , անձին յաղթելով . աշխարհիս սակաւաթիւ , մեծանշան , մարդկութեան վրայ հզօր ազգմունք ընող անձանց մէկն եղաւ . և այս հազար հինգ հարիւր տարի է , ճշմարիտ հաւատացելոց մէջ երկրիս ամէն կողմը՝ շատ հետեւող ունի , աւելի շատ զարմացող և պատուող :

Այս Ղփտի պատանիս է Ս . Անջոն , նախահայրն միանձանց :

=====

ՀԱՅԿՈՒՆՔ ԵՒ ՎԱՐԴՔ

ԶՐՈՅՑՔ ԳԵՌՍԵԱՑ

Երբեմն էր կոմն ոմն յազատաց Ազահ եւ խիստ , անուն Պերսի , Որոյ կալուածքն ըստ զրբուցաց , Տարածէին յողջոյն քեռսի :

Յաճախ ի մարտ կամ յորս դիմէր , իսկ ի տաճար գոգցես բընաւ . Զաղքատն անինչ զոր սիրէ Տէր , Նա ոչ սիրէր՝ կամ յոյժ սակաւ :